ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2023 թվականի N 1820 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի N 922-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «բ» ենթակետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կանոնադրությունը հաստատելու մասին» N 922-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում «9-րդ» բառը փոխարինել «5-րդ» բառով.

2) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի կառուցվածքում՝

1) գլխավոր շտաբի կազմակերպչական զորահավաքային գլխավոր վարչությունն անվանափոխվում է կազմակերպչական զորահավաքային գլխավոր վարչության.

2) գլխավոր շտաբի հետախուզության գլխավոր վարչությունն անվանափոխվում է հետախուզության գլխավոր վարչության.

3) զինված ուժերի հրթիռային զորքերի և հրետանու վարչությունն անվանափոխվում է հրթիռային զորքերի և հրետանու վարչության.

4) զինված ուժերի հակաօդային պաշտպանության զորքերի վարչությունն անվանափոխվում է հակաօդային պաշտպանության զորքերի վարչության.

5) զինված ուժերի ավիացիայի վարչությունն անվանափոխվում է ավիացիայի վարչության.

6) զինված ուժերի ինժեներական զորքերի վարչությունն անվանափոխվում է ինժեներական զորքերի վարչության.

7) զինված ուժերի կապի և ավտոմատ կառավարման համակարգերի վարչությունն անվանափոխվում է կապի և ավտոմատացված կառավարման համակարգերի վարչության.

8) զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովման վարչությունն անվանափոխվում է բարոյահոգեբանական ապահովման վարչության.

9) զինված ուժերի ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության զորքերի վարչությունն անվանափոխվում է ռադիացիոն, քիմիական, կենսաբանական պաշտպանության զորքերի վարչության.

10) զինված ուժերի անօդաչու թռչող սարքերի վարչությունն անվանափոխվում է անօդաչու թռչող սարքերի վարչության.

11) գլխավոր շտաբի ռադիոէլեկտրոնային պայքարի զորքերի վարչությունն անվանափոխվում է ռադիոէլեկտրոնային պայքարի զորքերի վարչության.

12) գլխավոր շտաբի զորքերի ծառայության վարչությունն անվանափոխվում է զորքերի ծառայության վարչության.

13) գլխավոր շտաբի գաղտնիության ռեժիմի ապահովման ծառայությունն անվանափոխվում է գաղտնիության ռեժիմի ապահովման ծառայության.

14) գլխավոր շտաբի ռազմատեղագրական ծառայությունն անվանափոխվում է ռազմատեղագրական ծառայության.

15) գլխավոր շտաբի ռազմանվագախմբային ծառայությունն անվանափոխվում է ռազմանվագախմբային ծառայության.

16) գլխավոր շտաբի վարչակազմակերպչական վարչությունն անվանափոխվում է վարչակազմակերպչական վարչության.

17) գլխավոր շտաբի օպերատիվ գլխավոր վարչությունը բաժանվում է՝ ստեղծելով օպերատիվ գլխավոր վարչությունը և ռազմավարական պլանավորման վարչությունը.

18) զինված ուժերի պատրաստության գլխավոր վարչությունը բաժանվում է՝ ստեղծելով երկու նոր կառուցվածքային ստորաբաժանում՝ մարտական պատրաստության վարչությունը և ֆիզիկական պատրաստության և սպորտի ծառայությունը.

19) զինված ուժերի սպառազինության վարչությունը դադարեցնում է գործունեությունը.

20) զինված ուժերի թիկունքի վարչությունը դադարեցնում է գործունեությունը.

21) զինված ուժերի ռազմաբժշկական վարչությունը դադարեցնում է գործունեությունը.

22) զինված ուժերի տարածքային պաշտպանության և պահեստային ուժերի հրամանատարությունը դադարեցնում է գործունեությունը.

23) գլխավոր շտաբի ստանդարտացման և չափագիտության ծառայությունը դադարեցնում է գործունեությունը:

3. Սահմանել, որ գլխավոր շտաբի կառուցվածքում՝

1) գաղտնիության ռեժիմի ապահովման ծառայությունը, ռազմատեղագրական ծառայությունը և ֆիզիկական պատրաստության և սպորտի ծառայությունը գործում են վարչության կարգավիճակով.

2) ռազմանվագախմբային ծառայությունը գործում է բաժնի կարգավիճակով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի դեկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ